ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/88» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով բժշկական կահույքի /101 դպրոցներ/ գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **29.06.2026թ**

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ՝ Արման Երանոսյան

Էլեն Ստեփանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Խառատյան

1. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին.

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/88-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընտրված մասնակից «Ամուրա» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով 19.06.2026թ ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը /1-6-րդ, 37-51-րդ, 55-62-րդ, 64-66-րդ, 79-84-րդ, 86-90-րդ, 97-101-րդ չափաբաժինների մասով/, սակայն վերջինս «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում (մինչև 2026 թվականի հունիսի 26-ը ներառյալ) չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, որակավորման ու պայմանագրի ապահովումները:

1.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «Ամուրա» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.3 Առաջնորդվելով սույն արձանագրության 1.2 կետով և ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 58-րդ կետով, գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա, պայմանագիր չկնքելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.4 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «Ամուրա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Մկրտչյան

_____ Արման Երանոսյան

_____ Էլեն Ստեփանյան

_____ Լիանա Խառատյան /քարտուղար/